— Նո՞ր կ'ուգաս Ոստանեն, որդեակ Գրիգոր, եւ ամէնը ո՞ղջ, առո՞ղջ էին:

— Այո, Տէր,— պատասխանեց Գրիգոր:

— Երկիրս ի՞նչ վիճակի մէջ տեսար, որդեակ:

— Երջանիկ այնքան, որքան ոչ մի տեղ Հայաստանի մէջ:

— Ինչպէս Կ'ոգովտի գաւառը: Երկու-երէք անգամ այս տարուան մէջ անցայ այս տեղաց. եւ միշտ, ինչպէս սովորութիւնս է, գեղերը գիշերեցի. ամէն տեղ տեսայ երջանկութիւն. եւ Մամիկոնեանց Տիկնոջ գովութիւն եւ օրհնութիւն լսեցի այդ բարի եւ պատուական շինականաց բերնեն: Քիչ-քիչ ինձ համոզմունք կը դառնա թէ մենք երջանիկ ընելու համար ժողովուրդը կանանց պէտք է յանձնենք երկրին կառավարութիւնը, եւ միայն պատերազմով զբաղինք, միայն եթէ այն եւս կարէնայինք յաջողութեամբ ի գլուխ հանել:

Եւ այս վերջի խօսքերն այնպիսի տխուր եղանակով մը զրուցուեցան, որ Սուրէն անգամ սկսաւ մտածել թէ ինչ պատասխան պէտք էր տալ: Բարեբախտաբար երկու սպասաւորք փայլուն պղնձէ սեղան մը բերին արծաթեայ սկաւառակներով բեռնաւորեալ, որ զանազան համադամք կը պարունակէին:

Տիկինը քաշուեցաւ գնաց իւր սենեակները, Սուրէն միայն սեղանակից եղաւ իշխանին, որ սակաւապետ եւ չափաւոր ընթրիքը շուտով վերջացուց եւ բարի գիշեր մաղթելով Սուրէնի եւ Գրիգորի իրեն պատրաստուած անկողինը մտաւ զբաղած երկրին պաշտպանութեան խորհրդովք մինչեւ որ քունը հասաւ մտքին եւ մարմնուն հանգիստ տալու համար: Նոյն վիճակին մէջ է նաեւ Գրիգոր, բայց իւր միտքը երկրի պաշտպանութեամբ չէր զբաղէր, այլ Ռշտունեաց Օրիորդին քաղցր պատկերը զինք կը յուզէր: